

# ԲԱՐՈՅԱԿԱՆՆ ՈՒ ԲԺՇԿԱԿԱՆԸ

## ՆԱՐԵԿԻ ՄԷՋ

Նարեկը՝ մարդկային չափանիշով այս դժալելի ողբերգութիւնը եւ տիեզերական տեսիլքով ոսկեմատեանը, աղօթազիրք մ'ըլլալով հանդերձ, ճոխ համայնադիտարան մըն ալ է:

Կրօնական, իմաստասիրական; դիտական, հոգեբանական, բարոյագիտական, բժշկական եւ այլ հարցերու շարկապումովը կառուցուած հայ մտքին պերճատեսիլ այս կոթողը, կարելի է դնել ու քննենել իր միապաղաղ ու զանգուածային ամբողջութեանը մէջ, կամ մասնակի նկատումով մը՝ կանգ առնել որոշ հարցի մը շուրջ:

# ՆԱՐԵԿԱՅԻԻ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԸ

## ԵՒ ԱՆՈՐ ԱՂԲԻԻՐԸ

Ա. - ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

« Իտրայելի պէս մի տար ինձ սրտի արգանդ անորդի Ո՛վ ամենազուրկ, եւ ոչ ալ ցամքած ըստինքներ աչքի »  
ՆԱՐԵԿԱՅԻ

Վերոյիշեալ զոյգ մը տողերուն մէջ պատկերալից կերպով խտացած կը գտնենք Նարեկացիի բարոյական ըմբռնումին ամբողջ էութիւնը:

Նարեկացին, հակառակ իր երկարապատում ու ծանրաբեռնուած ոճին, յաճախակի կերպով այս կարգի լուսաշող, կըտրուկ եւ շլացուցիչ փայլատակումներ ունի, որոնցմէ իւրաքանչիւրը՝ զիրք մը կ'արժէ, հատոր մը կը խտացնէ:

Ան բացառիկ տաղանդով օժտուած ճարտարագէտն է, երկու տողով, մինչեւ իսկ մէկ բառով, ամենաբարդ հարցն իսկ շքեղօրէն ու հարապատօրէն պատկերացընելու տեսակէտով:

Իբրեւ բժիշկ, ահա՛ այս վերջին աստ՝ մանտիակումովն է որ կը համարձակուի խոնարհօրէն մօտենալ սոյն մատեանին նպատակ ունենալով ճշգրէլ՝ անոր բարոյագիտական աղբիւրը, անոր մէջ զոյգութիւն ունեցող բժշկական հարցերը, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի հազարամեակ հաւատքովը նուիրագործուած իր ամենաբուժիչ համբաւին նշանակութիւնն ու տարողութիւնը:

Նախ տեսնենք թէ ո՞րն է Նարեկացիի շատազովական բարոյագիտութիւնը եւ ո՞ւրիկէ ծնունդ կ'առնէ ան:

Ոչ միայն այդ կարգի յայտնութիւններէն կարելի է բնորոշել Նարեկացիին բարոյական դաւանանքը, առանց մանրամասնութիւններու մէջ մխրճելու, այլ նաեւ իր ոճին մասնայատուկ դրոշմէն: Բաւական է էջ մը կարդալ իր հրաշակերտ մատեանէն, համոզուելու համար որ իր գործածած գոյականներու եւ անձականներու հոյլը, մտածումի եւ տրամաբանութեան սասն կազապարովը չեն ազուցուած, այլ սրտին զօրովը կենսաւորուած զգայական յորդումներ են, որոնք բառերու երանդներու մէջէն ընթանալով՝ ջերմարուս ծըփանքներու կը վերածուին ու կ'առնինքնին մեր հոգիները:

Նարեկացիին հոգեկան ամբողջ կառուցուածքը, ամէն տեսակէտով, միտաբար բարոյականութեան շաղախովն է կերտուած:

Իր հրաշակերտ մատեանին իւրաքանչիւր բառը, իւրաքանչիւր տողն ու հատուածը, «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» մականին տակ զրի առնուած է:

Միրտն է բարին չարէն զանազանող ճօճանակը, սրտին զարկէն ծնունդ առնող ինքնարուս հոգեկան թրթռացումներն ու զգացական զեղումներն են, որ մարդս հաղորդակից կը դարձնեն ուրիշին տառապանքին ու դրկանքին:

Միրտն է հղօրագոյն մղիչ ուժը մարդկային զգացումներու բերեղացման, անոր շնորհիւն է որ մարդս կը սրբազրէ իր սայթաքումները, հոգեկան պայքարի կրկնէն զուրս կու գայ աւելի զգաստացած, աղնուացած եւ մեծցած, ոչ նուազագոյն վարանումով կը գտնէ բարիին եւ ճշմարիտին լուսաւոր ուղիները:

Առանց յոյզի եւ արցունքի չկայ բարոյականութիւն, ահա՛ թէ ինչո՞ւ Նարեկացին կը բացաղանչէ՝ «Իտրայելի պէս մի՛ տար ինձ սրտի արգանդ անորդի ո՞վ ամենազուրկ, եւ ոչ ալ ցամքած ստինքներ աչքի», նոյնպէս առանց խղճի խայթին յարուցած փոթորիկին՝ կարելի չէ զանազանել չարն ու բարին, կամ առանց զգացումի եւ զգայնութեան յորդառատ ու կրքոտ բըխումին, անհնար է հաղորդակից ըլլալ շրջապատին:

Պէտք է որ հոգին ըմբոստանայ անարդարութիւններու դէմ, պէտք է որ մեր ներաշխարհը խռովի աղիոգորմ ճիչերու եւ պաղատանքներու հեծեծաղին ողբերէն, պէտք է որ արցունքի բերեղ շիթերով զովանայ եւ պայծառանայ մեր տեսողութիւնը, որպէսզի զուրթի շինիչ զգացումէն մղուած՝ ի վիճակի ըլլանք ձեռք կարկանդակու զրկուածին ու տառապողին, անոնց տալով ո՛չ թէ մեր ունեցածէն փշրանքներ, այլ ինչ որ մարդկօրէն հնարաւոր է,

մինչեւ իսկ բան մըն ալ աւելին՝ դէպի իտէալին ձգտելով:

Ահա՛ այսպիսի բացառիկ առաքինութիւններով օժտուած մարդիկն են որ կը մարմնացնեն բարոյական մեծութիւնները, ասոնք են որ իրենց խօսքովն ու զործովը հաւաքականութեան ծոցին մէջ բարու-թեան սերմը կը ցանեն, սրտին ժանդոտած թեան սերմը կը ցանեն, սրտին ժանդոտած թեան սերմը կը ցանեն ու անսլաքները շարժման մէջ կը դնեն ու անսահման ողբերգութիւն ստեղծելով՝ կը հրկիզեն հոգիները, յարգանք կը պարտադրեն, ու իբր մեծագոյն վարձատրութիւն՝ կը դասուին սուրբերու եւ հերոսներու շարքը:

Այսպիսի՛ հոգեչէն երեւոյթներու ծրնունդ չի կրնար տալ ոչ քանտեան վարդապետութիւնը, եւ ոչ ալ ընկերային ու հաւաքական ճիղերով ստեղծուած բռնազրօսիկ բարոյականութիւնը:

Պէտք է որ միայն շահը նկատուի կեանքի ու բարոյականութեան մեծագոյն կեանքի ու բարոյականութեան մեծագոյն տուժը ոչ միայն առաքինութիւններ չեն, այլ վատասերիչ աղաւակներ են: Պէտք է ալ շահիլ՝ ցրուելու համար, պէտք է հաւաքել՝ տալու համար, տալու հաճոյքը շատ քել՝ տալու համար, տալու հաճոյքը շատ քել՝ հոգեչէն է քան ժլատօրէն զրպանին մէջ ամբարեկուծը, զոհաբերումի արդասիքովն է որ մարդս կրնայ մեծնալ աղնը-ւանալ, հերոսանալ ու սրբանալ:

Միտաբար բարոյականութեան զոհաբերումի այդ դուռը, զոց կը մնայ խորամանկին, անզուրկին եւ եսասէրին առջեւ, ազուէսներն ու դայլերը՝ բարոյականութեան դիմակին տակ ծպտուած՝ չեն կրնար անկէ ներս խիզախել: անոր սրբազան սեմէն մի միայն բարիները կրնան ներս մըտնել:

Նարեկացիի ողբերգութեան մատեանին մէջ, միտաբար բարոյականութեան այդ հոգեպարար կրկնային մէջն է որ կ'ապրինք:

Հոն, ամբողջ տիեզերք մը կայ համարուած՝ իր Արարիչովը, ստեղծագործու-

Թիւններովը, կայծկլտող աստղերովն ու անհունութեան խաւարալից անջրպետներովը:

Հոն, ոչ միայն կ'ուրուագծուի ամենակալ Աստուծոյ գոյութիւնը, իր արարչագործութեան պերճանքին մէջէն, այլ տեսանելի դառնալու աստիճան հաղորդակից կը դառնայ մեզի:

Իւրաքանչիւր բառ աստղի մըն է վերածուած, ուրկէ խորհուրդ մը կը պլպլայ, զգացում մը կը ծփայ: Ածականներու եւ գոյականներու ճոխ համադրութիւնովը, բառերու հրաշակերտ կառուցումովը, համաստեղութիւններ են կերտուած, որոնցմով գեղեցիկ պատկեր մը կ'ուրուագծուի, կամ աղօթք մը կը բարձրանայ:

Երկնքի համայնապատկերին յար եւ նըման, հոն կայ թէ՛ լոյս եւ թէ՛ խաւար, կայ դիւրամատչելին եւ դժուարամատչելին, տեսանելին եւ անտեսանելին, եւ հակադրութիւններու այս պատկառաղբեցիկ վիպարութեանը վրայ է որ հիմնուած կը գտնենք անոր տիեզերական կառուցումը: Երկինք եւ երկիր իրարու հետ են խառնուած, Արարիչն ու «աստուած կոչեցեալը» դէմ դիմաց են կանգնած:

Առաջինը, իր անսահման մեծութեանը մէջ խակ, շատ պարզ կը թուի, ան լոյսն է, յոյսն է, մխիթարութեան ու ամէն տեսակ բարիքի մշտահոս աղբիւրն է: Դժուարահասկնալին՝ սա աստուած կոչեցեալն է, որ առաջինին մէկ «փշուճը» ըլլալով,

« Ահա՛ մարմինդ կըրող ու տանող Երկու միակցորդ ու խորհրդաւոր ոտքերուդ վըրայ Հրեշտակի նըմանութեամբ կառուցուեր ես դու, իբր կրկնաբարձ քու բազուկներովդ վերաբլաց՝ իբր թըրիչ առած թեւերով՝ դիտես աշխարհին հայրենի. Ո՛վ յիմար, ինչո՞ւ կորացար գետնին եւ միշտ աստեղնին իրերով հոգած՝ Ապաքէն անցար անապատկան ցիւերու կարգին: Մարմինիդ աշտանակին վրայ՝ իբրեւ նըրագ բազմաբերանեան՝

անոր մէկ «ճառագայթը», չի դադրիր անեղծուածներէն մեծագոյնը ըլլալէ:

Նարեկացին դայն ուսումնասիրելու համար, ստիպուած է խորհրդապաշտի եւ երբեմն ալ իրապաշտի աչքերով քննել ու գննել:

Իրապէս ալ ան միայն խորհրդապաշտ մը չէ, այլ տեղին համեմատ իրապաշտ մըն ալ, ու յաճախ իր յղացումները այդ երկու ըմբռնումներու խառնուրդովը շարախուած են:

Մարդուն մասին յայտնած իր դաղափարները, ահա այդ գրոշմը կը կրեն:

Նախ, ան բացառիկ ճարտարութեամբ կը քանդակէ մարդկային էակին Ֆիզիքական կազմը, կը մատնանչէ անոր «երկնա-հայեաց» կառուցումը, «վերամբաձ թեւերուն» սլացքը, « բազմաստեղծ ճրագի բերնի » նմանող բոլորակ գլուխը, ու այդ հոյակապ ճարտարապետութեանը մէջ կը տեսնէ մարդուն վիճակուած վսեմ առաքելութիւնը:

Ահա՛ Նարեկացիին դրշովը յօրինուած այդ պերճատեսիլ պատկերը, որուն աշխարհաբարի ճարտար վերածուածը կատարուած է Պոլսոյ նորընտիր պատրիարք Գ. Սրբազան Խաչատուրեանի կողմէ: Այժմ կը համարինք երախտադիտօրէն յայտարարելու, թէ մեր հետագայ մէջըրբումներն ալ դրեթէ ամբողջապէս իրեն կը պարտինք:

Բոլորակ գլուխդ հաստատուեցաւ.

Որպէսզի տիպար լոյսի շընորհէն չըրեւանալով՝

ԶԱստուած տեսնես եւ անաց բաներու վրայ խորհրդածես »:

— Բան ԽԶ —

Բայց «կաւակերտ այս էակը, մի միայն սուկորի, մկաններու եւ պէսպիսի գործարաններու՝ ալ մը հողի եւ ջուրի՝ համադրութիւնը չէ, ան օտտուած է նաեւ իմա-

ցական ու զդայական բարձր յատկանիչերով:

Նարեկացին շարունակելով վերի հասուածը՝ կը յարէ.

« Կրկնապէս բանականութեան պատուով նոխացար,

Որպէսզի պատմես անարգել լեզուով

Գերազանցութիւնը քեզի տրուած բարեմասնութեանց:

Չարտար մատներով քիզաւոր ձեռքովդ՝

Կեանքի աներածեշտ պէտքերն հոգալու՝ աստուած կոչուեցար,

Հայեցողութեամբ իբրեւ գործակից ամենաբաշխ աջին Աստուծոյ »:

Արդ «աստուած կոչեցեալը» դիտէ տրամարանել, թուանշաններու կարհուրդին մէջէն տիեզերական օրէնքներ բանաձեւել, հիւլէին կազմին թափանցել, դայն պայթեցնելով հրկիզել աշխարհը, համադրել նրթերը, տարբալուծել դանոնք, բնութեան երեւոյթները ուշի ուշով քննելով՝ անոնց յաջորդական հանդրուանները եւ կապակցութիւնները ճշդել:

Բացի իմացական բարձր յատկանիչերէ, նոյնինքն այդ մարդը՝ կը յայտարարէ կրօնական, զգացական, հոգեկան եւ գեղարուեստական հակումներ, որոնք աստիճան մը եւս կը բարդացնեն իր անեղծուածային դոյութեան իմաստը:

Մանաւանդ զգացական եւ բարոյական արտայայտութիւններու տեսակէտէն, ան հակադրութեանց կատարեալ թնճուկ մ'է:

Ան կարող է ողորմիլ ու դթալ, սրբանալ եւ հերոսանալ, ինչպէս նաեւ արիւնաբոլ հրէշի մը վերածուելով՝ սարսուղ շեցիկ սճիրներ գործել:

Կարող է ստել, կեղծել, բամբասել, գողնալ, շողոքորթել ու իր ճղճիմ ետին մէջ ամփոփուելով՝ քար գնել իր սրտին

վրայ, սողունի մը նման տափակնալով՝ որդի մը պէս ցելսին մէջ գալարուելի:

Դժբախտաբար այս վերջին դասակարգին կը պատկանի մարդկութեան ստուարագոյն մասը, սակաւթիւ է այն ընտրաբարձր նուրբ համար նուիրումն ու գոհարենին՝ որուն համար նուիրումն ու արդարաբանութիւնն ու արդարաբանութիւնը, բարոյական հիմունքը կազմելով իրենց ետին, դիտեն վերանալ, դէպի մեկով իրենց ետին, դիտեն վերանալ, դէպի բացարձակին ձգտիլ ու լիաբուն կերպով բարիք սփռել ամէն կողմ:

Արդ, ի՞նչպէս բացատրել որ հրեշտակաձեւ մարդը, իր երկնահայեաց կառուցուածքովն ու գոյե բազուկներովը, որոնց վիճակուած կը թուի բարիք սերմանել, կը կորացնէ իր մարմինը ցիտի մը կարգը անցնելու աստիճան, կամ բոլորովին կը տափակցնէ դայն՝ գետնաքարը ճիճիի մը զգուշի կերպարանքը իւրացնելով:

Այս հարցին պատասխանը Նարեկացին կու տայ մէկ հատիկ բառով, որ ամբողջ հաստոր մը կ'արժէ:

Իր վառ երեսակայութենէն ծնունդ առած այդ բառը, աննման է իր տեսակին մէջ: Մարդկային ոչ մէկ լեզուի մէջ գո-

յուրիւն ունի անոր համապատասխան որակում մը, ան մի միայն հայերէնի ընծայած քերականական կարելիութիւններովն ու Նարեկացիի բացատրիկ հանձնարովը կրնար իրագործուիլ:

Նարեկացիին մարդուն ճակտին «մեղսամակարդ» բառը խարանելով, անջնջելի կերպով քանդակած է մարդկային նկարագրին ամենացայտուն յատկանիշը: Ըստ

« Կար ատեն, կը դրէ Նարեկացին, որ ես դեռ չկայի, եւ դուն ստեղծեցիր, եւ չաղաչեցի, եւ գոյացուցիր,

Գիտէիր թէ ինչ ներկայիս պիտի պատահէին ինձ՝ ու չամտեսցիր. Նախատես աչքովդ նրկատեցիր չարագործութիւնը պատժապարտիս՝ եւ յօրինեցիր »:

Այսպէս մեղքին փուշը անկորնչելի կերպով խրած կը մնայ մարդուն էութեանը մէջ, ու ան իր ժահրը կը հոսեցնէ անոր գոյութեանը ամբողջ ընթացքին:

Մարդս կը ծնի «մօրը արդանդէն իսկ մեղքերու դժնիկ փուշը ընձիւղելով», մանկութեանը՝ ան կը մնայ «չար յօժարութեանց մէջ արձանացած», իսկ «ուռնայնօրէն բարդուող ու կուտակուող տարիներու ընթացքին», իբրեւ մեղսամակարդ, ան տեսականօրէն դատապարտուած է մեղանչելու:

Հինէն ի վեր գոյութիւն ունեցող համոզումի մը համեմատ, մարդը կազմուած է հողիէ մը եւ դայն պարփակող «կաւէ պատեանէ» մը:

Մասնաւորապէս այդ կաւակերտ պատեանն է, ոսկորէ եւ միտէ բաղկացած մասը, որ մեղսամակարդ կը դարձնէ մարդս:

Իբրեւ դարման, մանուսնող անցեալին մէջ, ոմանք՝ մարմնական փորձութիւններէն զերծ մնալու նպատակով՝ մենաստաններ կ'ապաստանէին, ուրիշներ՝ մարմինը գրկանքներով ու խոշտանդումներով տկարացնելուն մէջ կը փնտռէին հողիին փրկութիւնը:

Նարեկացիին, «մեղսամակարդ» է մարդը ոչ միայն չարն, ու բարին իրարմէ զանազանելու գիտակցութեանը տիրանալէն ետք, այլ անկէ շատ առաջ: Արարչին կողմէ այդ դատաւճիւրը արձակուած է արդէն, մինչեւ իսկ լինելութեան խորհուրդին անորոշութեան ծոցին մէջ, ու դայն պարտադրուած է մարդուն հարկադրաբար:

Իսկ մարդկութեան մնացած մասը՝ մեծազոյն զանդուածը կը յանձնէր ինքզինքը կեանքին տղմուտ յորձանքին, կը դառնար «մշակը մեղքերու, եւ արբանեակը անդամ գործերու», ու այս երկնաւոր կեանքին ընթացքին՝ մեղսամակարդ մարդը կամ անվրդով կ'ապրէր իրեն վիճակուած կեանքը, եւ կամ թէ գիտակցելով իր դժնիմ ճակատագրին՝ «խղճին խախթովը կը խոցոտուէր ու շունչին բոցովը կը ձենձերէր»:

Եթէ այս է իրականութիւնը, եթէ իրապէս սեւ մրուրով է դրուած մարդկային ճակատագրերը, ինչո՞ւ այլեւս խստութիւն ցոյց տալ մարդ արարածին հանդէպ ու անկարելին պահանջել իրմէ:

Նարեկացիին տրամաբանական ողջամիտ հետեւողականութիւնով կ'ըսէ՝ թէ ո՛չ Աստուած պէտք է խստօրէն դատէ իր ըստեղծած տկար արարածը, եւ ո՛չ ալ մարդիկ աններող ոգի մը ցոյց տան իրենց նմաններուն հանդէպ:

Իր մատենանին իւրաքանչիւր էջին մէջ, անձա՛յ այս տեսակէտն է որ կը պաշտպանէ: Յաճախ աղիողորմ պաղատանքներով, եր-

— Բան ժԸ —

բեմն ալ շեշտակի անդրադարձումներով, պաշտպան փաստարանի դերը կը ստանձնէ մարդուն եւ Աստուծոյ միջեւ, ու այդ ուղղութեամբ՝ ճարտասանութեան տրա-

մադրած ամէն ձեւերը կը սպառէ: Ահա հեծեծազին պաղատանքներէն նըմոյշ մը.

« Ամչցած մեծիդ անեղութեմէն՝ ի՞նչ կրնամ ընել. Թէ ոչ համբանալ եւ բերանս հողին՝ լո՛ւսի սրտիս մէջ Բարի յոյսին աչքերս յառած, մարգարէական խօսքին համաձայն: Իսկ թէ շարժուն շրթներուս փականքը բանամ՝ Բռնի խօսիլ տալ ուզելով անուց, Դարձեալ խղնարտանքս ինձ կը թելադրէ Հիւսել լալագին ու կրկնակ եղերգութիւն »:

— Բան ԽԵ —

Հետեւեալ տողերուն մէջ Նարեկացիին իր գլուխը վեր կը բարձրացնէ ու յանդըր՝ ոճը կը փոխուի, փոխանակ գետնաքարէ՝ հողին վրայ փռուելու եւ պաղատելու, ան

« Տէ՛ր, ողորմութեամբ տե՛ս բագմալըտանց եւ կարեվէր չարչարանքներու դառնալիշտ պատկերն՝ Զոր անա առջերդ կը տարածեմ: Կարեկից եղի՛ր ինձ իբրեւ բըժիշկ, եւ չըլլայ կանչես բնութեան համար իբրեւ դատաւոր »:

— Բան ԻԳ —

Իսկ երբեմն ալ, անոր պաշտպանողականը կը դառնայ աւելի կուռ եւ պահանջկոտ, փոխանակ գետնաքարէ աղերսար-

կուին՝ այս անգամ ըմբոստն է որ կը դուռայ.

« Մեռած պատկերիս դէմ մի՛ ոյս պահեր. Իմ անշունչ կերպարանքիս հետ մի՛ մտներ՝ դատաբնութեան, Մահու չափ տանջուածիս մի՛ աւելցներ նոր նոր հարուածներ, Կոտրած՝ խեղդէն անօթիս հետ մի՛ ուժգնութեամբ մարտնչիր, Դատալնուով կոշկոճուածիս դէմ մի՛ բարկութիւնդ կրկներ, Իմ կործանուած շինուածքիս մի՛ պատուհաս հասցներ, Ձիս՝ որ կշտամբուած եմ բագմապատիկ այսփան խօսքերով՝ Մի՛ դարձեալ դուն ալ յանդիմաներ »:

— Բան ԿԶ —

Ներողամտութիւնը պարզեւ մ'ըլլալէ վամ, Նարեկացիին կողմէ հետեւեալ վըաւելի տեսակ մը հատուցում է, իսկ սեմ՝ զաղափարականովը բանաձեւուած. «աստուած կորչեցեալին» համար՝ պատ-

« Քու բարեկրտակ կանոններուդ մէջ Մարդոց համար դուն դրիր մեծ պայման՝

Չարը չարով չըփոխարինել, այլ մէկ օրուան մէջ  
Եօթանասուն հեղ եօթն անգամ գործուած մեղքերուն ներել »:

— Բան ԺԵ —

Այս պատգամը Նարեկացիին հողիին նին հասնելով, կը վերածուի հանապա-  
մէջ բիւրեղացման բարձրագոյն աստիճան- զօրեայ աղօթքի մը.

« Եթէ մէկու մը համար օրհնութեամբ մօտեցայ՝ լըսէ՛.  
Իսկ թէ անէծճով՝ մի՛ ընդունիր, Գթա՛ծ:

Ես տառապեալս՝ ամենաքշուատ,  
Որ այս մատներով աղօթքներու մէջ յետնագոյնն եմ,  
Ամբողջ հոգիովս ներեցի ինձ դէմ մեղանչողներուն,  
Վասնզի դու ինքնդ արգիլեցիր  
Ունենալ դժխեմ իդճն՝ անիծելու անողորմաբար.

Եւ բոլոր սրտովս ես աղաչեցի  
Որ ինձ դէմ նենգող ողջ դժնէ՛ մարդիկ  
Բարիներուն հետ գտնեն հաշտութիւն.  
Եւ անոնց համար ծնրադուրեամբ իսկ պաղատեցայ »:

— Բան ԾԵ —

Ինչպէս որ կը տեսնուի, մեղսամակարդ  
մարդը, հակառակ բոլոր ընդոծին տկա-  
րութիւններուն, երբ Նարեկացիին իմաս-  
տովը շողախուած է, միայն մեղանչող  
մը չէ, ան օժտուած է նաեւ կարող մը բա-  
րեմասնութիւններով, որոնք կարող են

յոյսի եւ լոյսի նշոյլներով որոշ չափով  
ազնուացնել մեղապարտ մարդուն գոեհիկ  
դէմքը:

Ան կարող է ոչ միայն ներել, այլ նաեւ  
խղճահարել, դժալ, ապաշխարել, ու ը՛-  
սել.

« Վերի աղէտներուն հետ ինձի տրուեցան  
Ձղջում, խոստովանութիւն, աւետիս, պարգեւ, լոյսի երեւում,  
Աստուածային խրախոյսներ, փառքի ժառանգութիւններ,  
Յայտնութիւններ հրաշքներու եւ տեսիլներ սքանչելի »:

— Բան ԼԳ —

Դժբախտարար միայն Նարեկացիներուն  
տրուած է «լոյսի երեւումով», իտէալի մը  
պայծառացումով վերանալու միխիթարու-  
թիւնը, մինչդեռ մարդկութեան ստուարա-  
գոյն մասին համար, ծանր կը կշռէ մեղ-

քերու նժարը, ու այդ գորշ զանդուածը՝  
կորաքամակ կը մնայ իրեն պարտադրուած  
ահաւոր բեռան ծանրութեանը տակ:  
Ան կը հեւայ ու յուսահատօրէն կը հա-  
ռաչէ.

« Արդ, ողբերգական պաղատանքներու  
Ի՞նչ բամբասանքներ կրնամ շարադրել քեզի արժանի, ո՞վ անձրս քշուատ,  
Իսպառ անպատկառ, պատասխանելու համար անբարբառ,  
Անպէտ՝ Աստուծոյ եւ սուրբերու իսկ հաղորդակցութեան:  
Վասնզի եթէ ջրերը ծովերուն մելանի փոխեմ,  
Եւ ընդարձակ դաշտերն անասիման՝  
Լայնատարած թուղթի վերածեմ,

Եղեգնաշամբի անհամար ու խիտ անտառներն այլ ողջ  
Կտրեմ, ու գրիչներ շինեմ անոնցմով, —  
Ո՛չ իսկ մէկ մասը բարդուած այդ անօրէն արարքներուն՝  
Կրնամ սահմանել ու գրի առնել:  
Եւ թէ մայրիները Լիբանանի՝ կշռի լըծակի մէկ ծայրը կապեմ,  
Նըժարի թեթեւ թաքին մէջ դնեմ լեռն արարատեան, —  
Անոնք երբեք իմ մեղքերուս հետ պիտի չըկրնան գուգահաւասարիլ »:  
— Բան Թ —

Տանդէական հրավառ երեւակայու- կը նմանի, որուն վիճակուած է տաժա-  
թեամբ բանաձեւուած այս ահարկու տե- նակիր աշխատութիւններէն ահաւորա-  
սիւքին մէջ, մարդկութիւնը մեղքի շըղ- գոյնը.  
Թաներով կալանաւորուած թիսպարտի մը

« Հոս կը հաւաքուիմ՝ հոն վար կը հոսիմ,  
Կը բարդուիմ՝ ու տեղն ու տեղ կը բոքնկիմ:  
Հիմ կը դրնեմ՝ եւ գլուխ չեմ հաներ,  
Քիչ կը վատըկիմ՝ ու բիւր կը վատնեմ,  
Դոյզն ինչ կը գանձեմ՝ անչափ կը սպառեմ,  
Ուրիշները կը խըրատեմ՝ ես ինքս անփորձ եմ,  
Միշտ կը սորվիմ՝ եւ նշմարտութեան ծանօթութեան բընաւ չեմ համիր:  
Մարած չարիքներն՝ նոյնչափ կ'արծարծեմ,  
Փոքր ինչ սիրտ կ'առնեմ՝ եւ այլ աւելի կը յուսալուիմ,  
Ձիգ կը լարուիմ՝ եւ նոյն պահուն իսկ շուտով կը թուլնամ.  
Սա կը կարկըտեմ՝ նա կը պատըռտեմ,  
Կը հանեմ եղիհն՝ տատասկ կը տնկեմ:  
Հագիւ բարձրացած դարձեալ կ'իջնեմ ցած,  
Կը մտնեմ բոյնն իբրեւ աղանի եւ անկէ դուրս կ'ելլեմ իբրեւ ագուա  
Կու գամ քիչ մը ըսպիտակ, ու կը սըրանամ կը դառնամ սեւ համակ »:  
— Բան ՀԱ —

Ահատեսիլ այդ արգելաբանէն, յուսակորոյս ամբոխին հեծեծանքն է որ կը լսուի:

« Հա՛ն գիւ բանուէս, արձակեա՛ ի կապանացս,  
Ձերձ ի շղթայիցս, փրկեա՛ ի խեղդմանէս,  
Ագատեա՛ ի տագնապէս, քակտեա՛ ի յերկաթիցս »:

Բացառիկ անհատներ միայն կարող են  
փշրել իրենց կապանքներն ու դուրս սը-  
պըրդել այդ խոր վերապէն՝ սուրբերն ու  
հերոսները:  
Ասոնք տեսակ մը զերմարդեր են՝ հա-  
ւատքով, յոյսով ու մարդկային բարոյա-  
կանի վսեմ ըմբռնումներովը օժտուած  
բացառիկ անհատականութիւններ, որոնք  
իրենց կենցաղովն ու քարոզութիւնովը կը  
տիրապետեն շրջապատին ու մարդկու-  
թեան ուսովիրաները կը հանդիսանան:  
Ասոնք «մարմինին հասարակատեղծ տը-  
կարութիւններու» ծնունդը ըլլալով հան-  
դերձ, յիմարներու նման իրենց կեանքին

ամբողջ ընթացքին չեն կորանար դէպի դե-  
տին ու ճիճիի նման չեն սողոսկիր դար-  
չապարնուն վրայ, այլ իրենց հրեշտակա-  
նման կառուցուածքը աննկուն պահելով,  
«Վերամբարձ բազուկներով վերասլաց» կը  
սաւառնին դէպի մարդկային խոչանքերու  
բարձունքները ու կը լուսաւորեն մարդ-  
կութիւնը «իրենց մարմնոյն աշտանակին  
վրայ զետեղուած բաղմարերանեան ճրա-  
զովը»:

Կէս աստուածներ են, աւելի ճիշդը՝ ի-  
րական «աստուած կոչեցեալներ», ու կը  
նմանին Աստուծոյ այն չափով «որքան որ  
հնար է Աստուծոյ մարդը նմանի Աստու-  
ծոյ»:

Մեր անզուգական քնարերգուն յաջո-  
ղած է բացառիկ ճարտարութեամբ քան-  
դակել սուրբին իսկական տիպարը, կ'ար-  
ժէ որ անոր պերճատեսիլ վեհութիւնը  
լիովին ըմբռնենք:

« Երջանիկ ու փառաւոր են սուրբերու պարերն,  
Որոնցմէ ոմանք դոյզն ինչ սահեցան, բայց յանախագոյնըս հաստատուեցան .  
Փոքր ինչ սարսեցան, բայց սաստիկ վառուած Հոգւոյն նշոյլներով՝  
Մաքրուեցան ու լուսաւորուեցան:  
Գայթուսն անոնց՝ ցոյց կու տայ մարմնին տկարութիւնը հասարակըստեղծ,  
Եւ կանգնումն անոնց՝ բընական օրէնքը գերազանցող  
Վարքն առաքինի եւ հրեշտակային:  
Ուստի անոնք, որ Քրիստոսի հօր  
Ամէնիշխան եւ աստուածային բերնովն են օրհնուած,  
Եւ ընտրուածներ են, հոչակուած, խնկուած ու բարեբանուած,  
Իբրեւ Քրիստոսի անդամներ պաշտուած,  
Եւ իբրեւ Սուրբ Հոգւոյն օրհաններ են պատրաստուած, —  
Չունին իրենց մէջ խաւարի հետքեր եւ կամ նշմարներ,  
Այլ բացարձակ անկեղծութիւն եւ լուսաւոր արդարութիւն են,  
Նըմանութիւնը կրելով Աստուծոյ,  
Որքան հնար է որ Աստուծոյ մարդը նմանի Աստուծոյ:  
Պարզեք եւ նակատաբաց, վարմունքով բարձր անխոնարհի .  
Իրենց կեանքն ըզգաստ է եւ անըստգիտ,  
Աստուածպաշտութիւնն՝ ամուր անփոփոխ,  
Ընթացքն արի եւ անկասելի,  
Ճշմարտութիւնն է միատեսակ անըստերիւր,  
Դիմագրաւութիւնն է գօրեղ եւ անպարտելի,  
Տեսութիւնն է պայծառ, անշրփոք,  
Իմաստութեան սէրն է երկնային եւ անկոյտելի,  
Պատկերն է մաքուր, անաղարտելի »:

Մարդկային ճակատագրին մոռալ հա-  
մայնապատկերին ծոցէն, լուսաւոր կոթո-  
ղի մը նման վեր ցցուող սուրբերու այս  
հոգեպարար տեսիլքին ձգած տպաւորու-  
թիւնովը կ'ուզենք վերջացնել Նարեկի ան-

դաստաններուն մէջ մեր կատարած պըր-  
պըտումները:  
(Շարունակելի)

— Բան ՀԱ. —

Տ. Գ. Մ. Ս. Ս. Ս. Ս.

ՄԱՆԻՇԱԿՆԵՐՈՒ ՀՈՎՏԻՆ ՄԷՋ

Զարմուհիս՝ Գարչուհի Անթառամանին  
սրտայոյց յիշատակին

Մանիշակներու հովտին մէջ դաւար՝  
Դեռ մանուկ՝ աչքերս հիացմամբ խնդուն՝  
Կը թռչըտէի... վերէն կը շողար  
Արեւն հուրհուրան մայիսով լեցուն:

— Հոտաւէտ հովիտն, անհ, հեռու մընաց,  
Բայց բոյրն հողոյս մէջ խըտացաւ անդարձ . . . :

Գիւղէն՝ երջանիկ խնդուքի նըման  
Կը հնչէր զանգակն ըսպիտակ մտարան,  
Ու զօղանջն իր գիւղ՝ զողով անսահման՝  
Կը շոյէր զաշտն ու հողիս մանկական . . .

— Զանգակատունն հայ աւերակ է արդ,  
Բայց դեռ կը լըսեմ իր աղօթքն արծաթ:

Զանգը գաղտնիքներ կը ցանէր օդին,  
Յոյզեր անձանթ, իմաստներ թաքուն.  
Կը փսփըսային ծաղիկներ չորս դին  
Մինչ հովին թեւով կը շրջէր գարնունն . . .

— Դեռ յոյզեր գաղտնի կը խօսին ինձ հետ,  
Բայց գարունն անհոգ հեռացաւ յաւէտ:

Ծառ մը երագի նըման գեղեցիկ  
Կը կախէր իր շուքն արահետն ի վար,  
Որուն ցօղաթուրմ ճիւղէն՝ եկբանիկ  
Մ'իր սրինգն աղու նօթ առ նօթ կու լար:

— Կապոյտ ըստուերով ծառն այնտեղ է միշտ,  
Ահ, ո՛ւր է թռչնիկն իր երգով դիւթիչ . . . :

Ու կը հնձէի ծարաւով մ'անյագ՝  
Բուրաւէտ մարգին ծոցին մէջ կանանչ՝  
Ճպտուն աչքի պէս կապոյտ մանիշակ՝  
Երջանկութեան իբր հայելի, ճաճանչ . . . .